ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N217-Ա
« 11 » ՆՈՅԵՄԲԵՐ 2022Թ

ԼԻԱՆԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՍՄԲԱՏ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2003 թվականի հունվարի 17-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 38-րդ կետը, Լիանա Զոհրաբյանի հետ կնքած 2022 թվականի սեպտեմբերի 8-ի N503 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի «գ» ենթակետը, Լիանա Զոհրաբյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի նոյեմբերի 14-ից լուծել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Զոհրաբյանի հետ կնքած 2022 թվականի սեպտեմբերի 8-ի N503 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. 2022 թվականի նոյեմբերի 14-ից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գեղարվեստական մասի ղեկավար Սմբատ Առաքելյանի վրա:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կազմակերպության նյութական պատասխանատու անձանց:

11.11.2022

X

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Signed by: SARGSYAN DAVIT 4105850407

Ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ նոյեմբերի 11-ի
N217-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հուսիկ Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Նարինե Մաղաքյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ